Սոյն դպրոցի շինութեան կարկատանք և կրակից ապահովութիւնը	353	63
Գումար ծախուց	3031	18
Ընկերութիւնն ունի՝		
1. Ցոկոսաբեր արժէքոմներ իսկական գնով 9600 ռ. որ գնուած է	8768	84
2. Ընթացիկ հաշիւ Թիֆլիզի Առևտրական բանկում .	2700	53
3. Առձեռն դրամ	74	64
Գումար	11554	01
Բոլորն ի միասին	14575	19

Բացի սորանից ունի երեք հատ օսմանեան արծաթեայ դրամ և դպրոցական կահկարասիք և այլ իրեղէններ.

ՊԱՏՏՈՆԱԿԱՆՔ

ՔԱՂՈՒԱԾՔ

Աղգիս Վեհափառ Հայրապետը՝ Մարտի 23ին № 121 հաստատեց իւր սրբատառ Կոնդակաւն՝ Պատուելիք՝ Մկրտիչ Տէր Սիմէօնեանցին, Մահտեսի Յարութիւն Եաղանեանցին և Մկրտիչ Քիւրքճեանցին Արդուին քաղաքի Հայոց Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ եկեղեցական - ծխական միդասեան «Վարդանեան» տղայոց ուսումնարանի հոգաբարձական պաշտօնի մէջ։

—

Աղգիս Վեհափառ Հայրապետը Մարտի 23ին № 122 հաստատեց իւր սրբատառ Կոնդակաւն բարեկրօն Մարկոս քահանայ Մահտեսի Գէորգեանին և պատուելիք՝ երեցփոխան Արսէն Եզնակեանցին և Տօլուխան Մնացականեան Սարգսեանցին Դաւալու գիւղի եկեղեցական - ծխական միդասեան տղայոց ուսումնարանի հոգաբարձական պաշտօնի մէջ։

—

Աղգիս Վեհափառ Հայրապետը Մարտի 23ին № 123՝ հաստատեց իւր սրբատառ Կոնդակաւն բարեկրօն Գրիգոր քահանայ Զաքարեանցին և պատուելիք՝ Աստուածատուր Իսահակեանցին և Յարութիւն Բայաթեանցին Ներքին - Սարիղամիշ գիւղի եկեղեցական - ծխական միդասեան տղայոց ուսումնարանի հոգաբարձական պաշտօնի մէջ։

4 Մարտի.— Ս. Սինոդը բարեհաճեց կարգել վանահայր Ս. Գայիանէի վանուց Աթոռոյս Միաբան Արժ. Բարդուղիմէոս Վարդապետ Գէորգեանին, ի տեղի Գերապ. Կարապետ Եպիսկոպոսի Տէր Գալստեան։

—

9 Մարտի.— Ս. Սինոդը հաւաստիանալով, որ Ալեքսանդրապոլցի Ծերունի Մկրտիչ Քահ. Տէր Աւետիքեան Ամատունին հակառակ Սինոդի արգելական հրամանի, ինքնագլուխ և առանց թոյլտուութեան Հոգևոր Իշխանութեան կատարել է Շաւարշայ (Արշալոյս) Ալեքսանդրեան Կրեատեանցի պսակը իւր խօսեցեալ Տալիթայ Սահակեան Աբոյեանցի հետ, հրամայեց. ա) օրէնքի յայտնի յօդուածների հիման վրայ այդ պսակն համարել անվաւեր։ բ) Ալեքսանդրապոլի Հոգևոր Կառավարութեան բոլոր Անդամներին առնել յանդիմանութիւն, որ դոքա մինչև ցարդ ծածկել են և չեն յայտնել այդ գաղտնի պսակադրութիւնը Հոգևոր Իշխանութեան, պատուիրելով միանգամայն պատշաճական քաղաքական իշխանութեան ձեռքով (38 յօդ. ա հատ.) ապօրինի պսակեալներին անջատել միմեանցից և հարսին յանձնել իւր ծնողաց կամ ազգականաց։ գ) Գաղտնի և ապօրինի պսակադիր Մկրտիչ քահանային, որ զառամեալ է, խուլ և խելապակաս, արգիլել իսպառ ամենայն հոգևոր օրինակատարութիւններից, առնել փիլոնը և ցմահ արգիլել դասը բարձրանալ, ի գիտութիւն և ի զգուշութիւն քահանայից և ժողովրդեան։

—

9 Մարտի.— Ս. Սինոդը նկատելով որ ամ ըստ ամէ մանաւոր անձանց հրատարակած հայերէն Օրացոյցների մէջ տպւում են նաև ինչ ինչ կարևոր եկեղեցական գիտելիքներ, զոր. ձայները, աւուր պատշաճի շարականները, ճաշու, մանկունք, հարցք, օրհնութիւնք, համբարձիք և այլն և այլն, որոնք վերաբերում են Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ ծիսից և արարողութեանց և վերապահեալ են միմիայն Մայրագոյն Հոգևոր Իշխանութեան իրաւանց, հրամայեց. Հրատարակել Արարատ ամսագրի միջոցով ի գիտութիւն բոլոր օրացոյց յօրինողներին և տպագրողներին, որ նոքա այսուհետև չունին իրաւունք իւրեանց օրացոյցներում տպել որ և իցէ եկեղեցական գիտելիք Հայաստ. Ս. Եկեղեցւոյ

ծէսերին, արարողութիւններին և կամ երգեցողութեանը վերաբերեալ։ Այս մասին ծանուցանել միանգամայն և Կովկասի գրականական վերաքննական Մատնաժողովին ի գիտութիւն։

—

16 *Մարտի.— Ս. Սինոդը բարեհաճեց Սուրմալուայ գործակալութիւնը յանձնել Էվջիլար գիւղի բարեխօսն Ղուկաս քահանայ Երիցեանին, ըստ որում նախկին գործակալ՝ Իգդիրի բարեկ. Սամուէլ քահանայ Սողոմոնեանը նշանակուել է արդէն հովիւ նորընտիր Հայ զինուորներին։*

—

28 *Մարտի.—Ս. Սինոդը անհրաժեշտ համարելով Ալեքսանդրապոլու ընդարձակ և բազմամարդ յաջորդութեան փոխանորդ կարգել բարձրաստիճան հոգևորականներից, Վեհափառ Կաթուղիկոսի բարեհաճութեամբ այդ պաշտօնին նշանակեց Կարուց նախկին յաջորդ Գեր. Գրիգորիս Եպիսկոպոս Աղաւնեանցին։*

—

28 *Մարտի.—Ս. Սինոդը լսելով, որ Բագու քաղաքի վաճառական Պ. Եղիա Գ. Բուդաղեանց ի յիշատակ իւր հանգուցեալ եղբօր Թադէոս Աւագ քահանայի նուիրել է մի թաւշեայ նոր շուրջառ արծաթի ասխիւք Ս. Էջմիածնի Տաճարին,—հրամայեց Աւագ Լուսարարին մուտք գրել այդ Տաճարի տոմարում։ Տէր Աստուած ի հաճոյս իւր ընկալցի։*

—

28 *Մարտի Ս. Սինոդը լսելով Ախալց. քարոզիչ Բարեշնորհ Մեսրոպ Վարդապետ Ճերմակեանցի յայտարարութիւնը՝ հրամայեց նոյն քաղաքի նորընծայ Ներսէս քահանայ Համբարձումեանից առնել փիլոնը նորա ըմբոստ և հակառակասէր վարուց համար և ենթարկել երկամսեայ եկեղեցական ապաշխարանաց։*

—

30 *Մարտի.—Բագու քաղաքի բնակիչ վախճանեալ Մարգար Վէլիջանեանց Աղասեանց կտակել է յօգուտ Ճեմարանի Մայր Աթոռոյ 100 րուբլի։ Ս. Սինոդն արաւ պարտուպատշաճ կարգադրութիւնը այդ գումարն ստանալու։ Տէր Աստուած վարձահատոյց լիցի հանգուցելոյն։*

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ: